ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՏՈՆՈՅԱՆ Զ. Ս.

Գրադարանները՝ որպես գրավոր հուշարձանների պահոցներ, գոյություն են ունեցել հազարամյակներ ի վեր:

Հին աշխարհի ամենամեծ գրադարանը (մ.թ.ա. I դ.) Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում էր. ուներ մինչև 700 հազար ձեռագիր[1]: Ալեքսանդրիայում սովորելու տարիներին այդ գրադարանից օգտվել են Մովսես Խորենացին և Մեսրոպ Մաշտոցի մյուս աշակերտները:

Հայաստանում գրադարանները եղել են վանքերին ու մենաստաններին կից. տեղակայվել են առանձին շինություններում կամ վանքամերձ քարայրներում և կոչվել են ***գրատուն, գրանոց, գանձատուն, մատենադարան, դիվան,*** *երբեմն էլ՝* ***նշխարանոց, նշխարախուց***[2]*:*

Գրադարանները ազգերի, անշուշտ, նաև հայերի հոգևոր կյանքի և մշակույթի զարգացման մեջ կատարել ու այսօր էլ կատարում են անփոխարինելի դեր: Յուրաքանչյուր գրադարան կոչված է իրականացնելու իրեն հատուկ գործառույթները՝ պատմամշակութային, տեղեկատվական, հաղորդակցական, տեխնոլոգիական, մանկավարժական, վիճակագրական, սպասարկման և այլն: Որևէ գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել իր գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար: Ուստի անհրաժեշտ է սպասարկելի դարձնել գրադարանի գրքային ունեցվածքը: Դա նշանակում է՝ ստեղծել տեղեկատուներ, որոնցով հնարավոր լինի ընթերցողներին տեղյակ պահել գրադարանի ունեցած գրականության մասին՝ նրանց ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Գրադարանի՝ մշակութային հաստատություններից մեկի սոցիալական գործառույթները մարդկության պատմության ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Առաջին գրադարանների նպատակը եղել է փաստաթղթերի պահպանումը: Գրադարանը վերածվել է հասարակական կառույցի, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և ապահովում է հասարակական կապերի ու հարաբերությունների կայունությունը:

---

[1]**Մուրադյան Ց.,** *Քաղաքակրթությունների աշխարհագրություն: Դասագիրք բուհերի աշխարհագրություն մասնագիտությունների համար, Ե., 2011, էջ 108:*

[2]**Իշխանյան Ռ.,** *Հայ մատենագիտության պատմություն, հ. Ա., Ե., 1964, էջ 44:*

Գրադարանների՝ որպես հասարակական և սոցիալական կարևոր ինստիտուտի կենսունակությունն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել դրանց զարգացման նոր մոդելներ:

Լինելով մշակութային կազմակերպություն՝ գրադարանն ունի կանոնակարգված հավաքածու (անկախ նյութական կրիչից. լինի տպագիր կամ էլեկտրոնային գիրք, խտասկավառակ և այլն), ինչը ֆիզիկական և իրավաբանական անձանց, այն է՝ մասնագետների ու նյութատեխնիկական բազայի օգնությամբ, իրականացնում է տեղեկատվական, մշակութային, կրթական, գիտական գործառույթներ:

Գրադարանային հավաքածուն ձևավորվում է որոշակի չափա-նիշներով, դասակարգվում և համակարգվում:

Համակարգիչների մուտքը հեղաշրջում կատարեց տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների, թանգարանների աշխատանքի նորովի կազմակերպումը: Եվ պատահական չէ, որ ներկայումս գնալով մեծ թափ է ստանում այդ կառույցների թվայնացումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը գրադարաններ փոխեց ավանդական գրադարանի տեսքը՝ ինչպես գրադարանավարի, այնպես էլ օգտվողի համար: Եթե գրադարանավարի համար աշխատանքը դարձավ ավելի բարդ ու ծավալուն, ապա ընթերցողը լայն հնարավորություն ստացավ՝ օգտվելու տարաբնույթ ծառայություններից, որոնք մինչ այդ անհասանելի էին:

Ճանապարհը դեպի տեղեկատվական հասարակարգ, որի կարևոր բաղկացուցիչներից են թվային գրադարանները, տարածական կրթությունը և էլեկտրոնային առևտուրը, մարդկությանը կառաջադրի լուծել բազմաբնույթ՝ կազմակերպական, տեխնիկական, իրավական, լեզվաբանական, չափորոշման խնդիրներ: Ամերիկայի Միացյալ Նահանգները, լինելով «թվային գրադարան» գաղափարի ստեղծողը, հսկայական փորձ է կուտակել այդ ասպարեզում[3]:

Հայաստանյան շատ գրադարաններ, արխիվներ, թանգարաններ ևս ձեռնամուխ են եղել թվային գրադարանի ստեղծմանը: Ներկայիս զարգացումը տանում է դեպի հիբրիդ գրադարան, այսինքն՝ գրադարան, որտեղ թղթային կրիչներին զուգահեռ գործածվում են նաև տեղեկատվության էլեկտրոնային կրիչները[4]:

Մեզանում ևս վերջին տարիներին գրադարանային համակարգը զգալիորեն բարեփոխվել է: Եվ գործուն մասնակցությունը փոխանակային ծրագրերին ու դրամաշնորհային մրցույթներին մեծապես նպաստում է

---

[3] Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր Մեթոդական ձեռնարկ, Ե., 1996, էջ 68:

[4] **Զարգարյան Տ.,** *Թվային գրադարաններ Ե., 2002, էջ 262:*

Հայաստանի տարածքում գործող տարաբնույթ գրադարաններին ժամանակակից հանդերձավորում և մեթոդաբանություն ապահովելուն: Համընդհանուր դրական տեղաշարժերի ծիրում առանձին գրադարաններ ծավալում են բացառապես ինքնուրույն գործունեություն՝ մոտենալով համաշխարհային չափանիշները բավարարող հաստատության նկարագրին: Այս տեսակետից Հայաստանի Ամերիկյան համալսարանի Փափազյան գրադարանը բացառիկ երևույթ է ոչ միայն մեր երկրի, այլև տարածաշրջանի գրադարանային համակարգում:

Որպես գիտելիքների ու ազգային արժեքների կուտակման և տարածման կենտրոններ՝ գրադարանները համակարգչային ցանցերի ընձեռած հնարավորությունների շնորհիվ, ինչպես նաև իրենց պահոցներում եղած տեղեկատվության կառավարման հաշվին դարձան միջնորդներ՝ մարդկության կուտակած մտավոր հարստությունը գիտելիքի տեսքով հանրությանը փոխանցելու գործում:

Տեղեկատվականտեխնոլոգիաների զարգացումը քաղաքակիրթ աշխարհում ուղեկցվում է գրադադարանային համակարգերի համապատասխան բարեփոխումներով: Հիմնականում հենց արդի առաջավոր գրադարաններն են ապահովում տեղեկատվական հագեցած շտեմարանների ստեղծումն ու ընդլայնումը, զանազան տեղեկատվական ծառայությունների մատչելի սպասարկումը՝ տեխնոլոգիական նոր միջոցներով:

Մեզանում ևս վերջին տարիներին գրադարանային համակարգը զգալիորեն բարեփոխվել է: Կազմակերպական հսկայական ջանքերի, նյութական ներդրումների շնորհիվ ժամանակակից գրադարաններն առավել հասանելի են ուսանողների, գիտնականների, ողջ հանրության համար: Այսօր չափազանց հեշտացված է նյութի որոնումը, սպասարկումն ամբողջությամբ կառուցված է ընթերցողի ժամանակը խնայելու, նրա աշխատանքը հաճելի և դյուրին դարձնելու սկզբունքի վրա:

Պարբերաբար անցկացվող հասարակական հարցումների հիման վրա բարելավվում են ծառայությունները, մասնավորապես սպասարկումը:

Համակարգիչների ներդրումը գրադարաններին ստիպեց վերահմաստավորել գրացուցակավորման սկզբունքներն ու ամբողջ գործառույթը: Համակարգչից, որը տեղեկատվության պահպանման պահեստ է, տեղեկությունն անցկացնում են կրիչների վրա: Նախկինում գրքային քարտարանի համալրումը բավական աշխատարար գործընթաց էր: Արդի դարաշրջանում փոխարինելու եկան էլեկտրոնային գրացուցակները:

Սա հաճախ կոչվում է նաև առցանց կամ ժամանակի իրական կտրվածքում աշխատող: Վերին աստիճանի ճկուն է, արագագործ և ունի այն հիմնական առավելությունը, որ մատչելի է տարբեր վայրերում գտնվողներին: Այն կարելի է գրանցել սեղմապնակների վրա՝ մատչելի դարձնելով համաշ-

խարհային համակարգչային ցանցին չմիացած օգտատերերին: Այն քարտարանը հեշտությամբ համակցվում է գրադարանային գործընթացների ավտոմատացման ենթահամակարգերին /համալրում, գրքատաք, միջգրադարանային բաժնույթ և այլն/՝ կառուցելով մուտք՝ միավորված՝ գրադարանային ինտերնետի համակարգ: «Էլեկտրոնային գրացուցակ» հասկացությունը սերտորեն կապված է մեքենաընթեռնելի քարտագրման գաղափարին: Այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները, սկսվելով ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում, դեռևս 1960-ականների սկզբին հանգեցրին ՄԱՐԿ ձևաչափի մտահղացմանը: Այն հնարավոր է դարձնում նախօրոք որոշված ձևաչափերով մատենագիտական տվյալներ մուտքագրել: Դրա կատարելագործման աշխատանքները ներկայումս էլ շարունակվում են աշխարհի բազմաթիվ երկրներում: Քարտարանների պատրաստումը աշխատատար գործընթաց է, պահանջում է նյութական մեծ ներդրումներ և շահագործման ամենամյա բարձր ծախսեր: Այդ իսկ պատճառով շատ գրադարաններ ի վիճակի չեն թողարկել նման տեսակի քարտարաններ[5]:*

Ստեղծելով «էլեկտրոնային գրացուցակ», գրանցելով հոդվածների, գիտական ատենախոսության էլեկտրոնային տարբերակները խտասկավառակների վրա, միացված լինելով համացանցի համակարգչային ռեսուրսներին՝ գրադարանները կարող են օրվա ցանկացած ժամի, հաշվված վայրկյանների ընթացքում իրենց ծառայությունները մատուցել աշխարհի տարբեր ծայրերում գտնվող ընթերցողներին:

Կադրերի նկատմամբ պահանջները նույնպես փոխվում են: Աշխատողի արհեստավարժությունից, փորձից, գիտելիքների պաշարից, մի խնդրից արագորեն մյուսին անցնելու հմտությունից բացի, կարևոր են դառնում նրա անհատական գծերն ու նվիրվածությունը գրադարանի առջև դրված խնդիրների լուծման գործին: Գրադարանային մենեջերից կպանջվեն հոգեբանական գիտելիքներ, դրանց պակասի դեպքում՝ հոգեբանական ծառայությունների հետ համագործակցելու անհրաժեշտություն:

Ժամանակակից գրադարանների, տեղեկատվական կենտրոնների դերը լայն ենթակառուցվածքներ ստեղծելն ու մարդկությանը դեպի «բաց հասարակարգ» առաջնորդելն է:

Գիտության և տեխնիկայի զարգացման շնորհիվ ծնվեց տեղեկատվական գիտությունը, որի հիմքում ընկած են տվյալների որոնման ժամանակակից

---

* *ՄԱՐԿ (անգլերեն MARK-Machine Readable Cataloging) հապավումը բառացի թարգմանվում է՝ մեքենաընթեռնելի քարտագրում:*

[5] **Զարգարյան Տ.,** *նշվ. աշխ., էջ 114:*

մեթոդները, հարցումներին համարժեք պատասխանելու հմտությունը, որոնող համակարգի և օգտվողի միջև ուղղակի երկխոսությունն ու հակադարձ կապը[6]:

Գրադարանն ու տեղեկատվական կենտրոնն այսօր ոչ միայն տեղեկատվություն են հավաքում և պահպանում, այլև հետազոտում են, վերլուծում, կրթում:

Գրադարանները կարևոր ծառայություններ են մատուցում հանրությանը թղթային և էլեկտրոնային տեղեկատվությունից ճիշտ օգտվելու, փաստը քարոզչությունից տարբերելու, ուսուցողական ծրագրերի միջոցով արժևորելու լրատվության կառավարման գրագիտությունը:

Գիտակցելով ու կարևորելով տեղեկատվության կառավարման, գիտելիքի և ազգային արժեքների կուտակման ու տարածման, տեղեկատվական գործընթացների շարժը, տեղեկատվական տեխնոլոգիաների կապը և առաջնահերթությունը ժամանակակից կյանքում՝ հիմնավոր բարեփոխումներ ատարելու անհրաժեշտություն է առաջանում:

Գրադարանային գործին առնչվող խնդիրների կարգավորմանը մեծապես նպաստել է «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծում» նախագիծը, որն ուղղորդում է հայաստանյան գրադարանների արդիականացման, համաշխարհային տեղեկատվական դաշտին դրանց ինտեգրման հարցում, արտաքին օգտվողներին օգնում՝ արագ միանալու հայաստանյան մատենագիտական և բնագրային տարաբնույթ շտեմարաններին:

Հանրապետության խոշորագույն մատենագիտական շտեմարանն է Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանը, որտեղ գրանցվում են գրքերի, ամսագրային հավաքածուների, երաժշտական գրականության, խտասկավառակների վրա զետեղված հրատարակությունների, տեսալսողական նյութերի մասին մատենագիտական տեղեկություններ, ինչպես նաև տվյալներ՝ դրանց գտնվելու տեղի մասին, որոնք շատ կարևոր են արդի գրադարանագիտական և մատենագիտական զարգացման ասպարեզում:

Նշենք նաև, որ նախագիծը Հայաստանի գրադարանների համար մեծ հնարավորություն է՝ ավանդականից թվայինին անցնելու, ինչպես նաև տեղեկատվության և գրադարանավարության հայրենական շուկայում տեղեկատվական նոր տեխնոլոգիաներն ու ավտոմատացման գործիքաշարերը ներկայացնելու հարցում:

---

[6] Գրադարանների միությունների և հաստատությունների միջազգային դաշնության և Միացյալ Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության դպրոցական գրադարանի հռչակագիրը (Միջազգային փաստաթղթեր), Հայկական գրադարանային տարեգիրք, Ե., 2004, էջ 65-67:

Շտեմարանները, որ նախկինում մատչելի էին միայն գրադարաններ այցելելով, այժմ հասանելի են նաև էլեկտրոնային տարբերակով[7]:

Հիրավի, տեղեկատվական տեխնոլոգիաները գրադարաններին հնարավորություն են տվել բարելավել և զարգացնել իրենց ծառայությունները և հասարակությանը սպասարկել նոր ձևերով:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ БИБЛИОТЕК В СОВРЕМЕННОМ МИРЕ

ТОНОЯН З. С.

Резюме

Библиотеки играли и играют незаменимую роль в истории развития мировой культуры и в духовной жизни всех народов, в том числе и армянс-кого народа.

Развитие информационных технологий в цивилизованном мире сопро-вождается соответствующими реформами библиотечных систем. Благодаря огромным организационным усилиям и материальным вложениям в насто-ящее время библиотеки доступны студентам, ученым и обществу в целом.

THE ROLE AND IMPORTANCE OF LIBRARIES IN THE MODERN WORLD

Z. TONOYAN

Abstract

Libraries have played an indispensable role in the history of development of world culture and spiritual life of all nations, including Armenians.

The development of information technology in the civilized world is accompanied by appropriate reforms in the library systems. Thanks to the huge efforts of the organizational and material investments nowadays modern libraries are available to students, researchers and society in general.

---

[7] *Eifl_IP Գիտելիքի հասանելիության խթանում. Հեղինակային իրավունքը և գրադարանները, Ձեռնարկ գրադարանների համար հեղինակային իրավունքի և առնչվող խնդիրների մասին, Ե., 2012, էջ 7:*